# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

**20.04.2018թ.**

Նիստին մասնակցում էին՝ Ս. Գապոյանը, Ա. Ցազերյանը,
Գ. Դաշտոյանը, Ս. Ամիրխանյանը, Վ. Ավետիսյանը, Գ. Ղարիբյանը,
Վ. Հակոբյանը, Ա. Մարուխյանը, Ս. Զանգեզուրյանը
Նիստը վարող՝ քաղաքապետ Գուրգեն Մարտիրոսյան
Նիստը արձանագրող՝ քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Կարինե Մանուկյան

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

1. Գավառ համայնքի 2018թ. բյուջեում փոփոխություն կատարելու մասին:
2. 2018թ. բյուջեի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին:
3. Գավառի համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակում փոփոխություն կատարելու մասին:
4. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման կարգը սահմանելու մասին:
5. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը աճուրդային կարգով օտարելու մասին:
6. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը աճուրդային կարգով օտարելու մասին:
7. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը աճուրդային կարգով օտարելու մասին:
8. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը աճուրդային կարգով օտարելու մասին:
9. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային նշանակությունը փոխելու և հետագայում ուղղակի վաճառքի կարգով օտարելու մասին:
10. Դրամական Օգնություն տրամադրելու մասին:
11. Ցրտահարված, չորացած ծառատեսակների դուրս գրման մասին:
12. Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող Գավառ քաղաքի Ազատության 2-րդ փողոց թիվ 4 շինությունը քանդելու, շինության շուկայական և օգտահանության արժեքների որոշման մասին:
13. Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող 60 տոննա տարողությամբ տարրաները մնացորդային արժեքով օտարելու նպատակով աճուրդ հայտարարելու մասին:
14. ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքային համայնքի վարչական սամաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության վարելահողերը օգտագործման տրամադրելու և տարեկան վարձավճար սահմանելու մասին:

ՀԱՐՑ 1.

ՈՐՈՇՈՒՄ 18. ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ 2018Թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. Տ. Բրսիկյան/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Ս. Ամիրխանյանը, Գ. Ղարիբյանը

Ղեկավարվելով ,,Իրավական ակտերի մասին'' Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ և 60-րդ հոդվածների, ,,Տեղական ինքնակառավարման մասին'' Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5) կետի, 38-րդ հոդվածի 1) կետի պահանջներով, հիմք ընդունելով Գեղարքունիքի մարզպետարանի և Գավառի համայնքապետարանի միջև 16.01.2018թ. կնքված ազգային նվագարանների գծով վարձավճարների փոխհատուցման նպատակով այլընթացիկ սուբվենցիաների տրամադրման թիվ 7 և թիվ 8 պայմանագրերը, Գավառի քաղաքապետի 30.01.2018թ. 12-Ա կարգադրությունը, Գավառ համայնքի ավագանին որոշում է

Գավառ համայնքի 2017թ. բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Գավառ համայնքի 2018թ. վարչական բյուջեի եկամտային մասը.
   1) Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումները /սուբվենցիաներ/ պակասեցնել 1067500 /մեկ միլիոն վաթսուն յոթ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամով
   2) Տեղական վճարները պակասեցնել 4 225500 /չորս միլիոն երկու հարյուր քսանհինգ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամով, որից՝ համայնքային ենթակայության մանկապարտեզների ծառայություններից օգտվողների համար 1620000 /մեկ միլիոն վեց հարյուր քսան հազար/ ՀՀ դրամով, իսկ համայնքի ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների ծառայությունից օգտվողների համար 2605500 /երկու միլիոն վեց հարյուր հինգ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամով:
2. Գավառ համայնքի 2018թ. բյուջեի ծախսային մասը՝
   1) 09 բաժնի 1 խմբի 1 դասի /նախադպրոցական կրթություն/ գործառնական դասակարգման 4511 /սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական /համայնքային/ կազմակերպություններին/ տնտեսագիտական հոդվածը պակասեցնել 7008300 /յոթ միլիոն ութ հազար երեք հարյուր/ ՀՀ դրամով, իսկ 5134 /նախագծահետազոտական ծախսեր/ տնտեսագիտական հոդվածը 700000 /յոթ հարյուր հազար/ ՀՀ դրամով
   2) 09 բաժնի 5 խմբի 1 դասի /արտադպրոցական դաստիարակություն/ գործառնական դասակարգման 4511 /սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական /համայնքային/ կազմակերպություններին/ տնտեսագիտական հոդվածը պակասեցնել 11465100 /տասնմեկ միլիոն չորս հարյուր վաթսունհինգ հազար մեկ հարյուր/ ՀՀ դրամով, իսկ 4637 /ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին/ տնտեսագիտական հոդվածը պակասեցնել 1067500 /մեկ միլիոն վաթսունյոթ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամով:
   3) 08 բաժնի 2 խմբի 1 դասի /գրադարաններ/ գործառնական դասակարգման 4511 /սուբսիդիաներ ոչ /ֆինանսական պետական /համայնքային/ կազմակերպություններին տնտեսագիտական հոդվածը պակասեցնել 1442200 /մեկ միլիոն չորս հարյուր քառասուներկու հազար երկու հարյուր/ ՀՀ դրամով:
   4) 08 բաժնի 2 խմբի 3 դասի /մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ/ գործառնական դասակարգման 4511 /սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական /համայնքային/ կազմակերպություններին/ տնտեսագիտական հոդվածը պակասեցնել 2099900 /երկու միլիոն իննսունինն հազար ինն հարյուր/ ՀՀ դրամով:
   5) 01 բաժնի 6 խմբի 1 դասի /ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ/ գործառնական դասակարգման 4237 /ներկայացուցչական ծախսեր/ տնտեսագիտական հոդվածը պակասեցնել 2000000 /երկու միլիոն/ ՀՀ դրամով:
   6) 04 բաժնի 5 խմբի 1 դասի /ճանապարհային տրանսպորտ/ գործառնական դասակարգման 4251 /շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում/ տնտեսագիտական հոդվածը պակասեցնել 3000000 /երեք միլիոն/ ՀՀ դրամով:
   7) 08 բաժնի 4 խմբի 2 դասի /քաղաքական կուսակցություններ, հասարակական կազմակերպություններ, արհմիություններ/ գործառնական դասակարգման 4819 /նվիրատվություն այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին/ տնտեսագիտական հոդվածը պակասեցնել 20700000 /քսան միլիոն յոթ հարյուր հազար/ ՀՀ դրամով:
3. Պակասեցված գումարներից Գավառ համայնքի 2018թ. բյուջեի ծախսային մասին՝
   1) 08 բաժնի 2 խմբի 1 դասի /գրադարաններ/ գործառնական դասակարգման 4655 /կապիտալ

դրամաշնորհ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին/ տնտեսագիտական հոդվածին ավելացնել 600000 /վեց հարյուր հազար/ ՀՀ դրամ Գավառ քաղաքային գրադարանին գրքեր ձեռք բերելու համար:

2) 01 բաժնի 6 խմբի 1 դասի /ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ/ գործառնական դասակարգման 4823 /պարտադիր վճարներ/ տնտեսագիտական հոդվածին ավելացնել 1000000 /մեկ միլիոն/ ՀՀ դրամ՝ անշարժ գույքի կադաստրի ծախսերի համար:
3) 11 բաժնի 1 խմբի 2 դասի /համայնքների պահուստային ֆոնդ/ գործառնական դասակարգման 4891 /պահուստային միջոցներ/ տնտեսագիտական հոդվածը ավելացնել 41890000 /քառասունմեկ միլիոն ութ հարյուր իննսուն հազար/ ՀՀ դրամով, միաժամանակ համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային մաս կատարվող հատկացումը հաստատել 96890000 /իննսունվեց միլիոն ութ հարյուր իննսուն հազար/ ՀՀ դրամ:
4) 01 բաժնի 1 խմբի 1 դասի /օրենսդիր և գործադիր մարմիններ/ գործառնական դասակարգման 5132 /համակարգչային ծրագրեր/ տնտեսագիտական հոդվածը ավելացնել 300000 /երեք հարյուր հազար/ ՀՀ դրամով հաշվապահական ծրագիր ձեռք բերելու համար:
5) 08 բաժնի 2 խմբի 7 դասի /հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնում և պահպանում/ գործառնական դասակարգման 5113 /շենքերի և շինությունների կապիալ վերանորոգում/ տնտեսագիտական հոդվածը ավելացնել 2500000 /երկու միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամով Գավառ քաղաքի ,,անձնազոհ'' հուշապատի հիմնանորոգման աշխատանքների համար:
6) 09 բաժնի 2 խմբի 1 դասի /հիմնական ընդհանուր կրթություն/ գործառնական դասակարգման 5113 /շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում/ տնտեսագիտական հոդվածը ավելացնել 2075000 /երկու միլիոն յոթանասունհինգ հազար/ ՀՀ դրամով, 5134 /նախագծահետազոտական ծախսեր/ տնտեսագիտական հոդվածը՝ 120000 /մեկ հարյուր քսան հազար/ ՀՀ դրամով, իսկ 5122 /վարչական սարքավորումներ/ տնտեսագիտական հոդվածը՝ 980000 /ինն հարյուր ութսուն հազար/ ՀՀ դրամով ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի 8-րդ հիմնական դպրոցի Զ. Բալաբեկյանի անվան ՆԶՊ դասասենյակի վերանորոգման աշխատանքների և գույքի ձեռք բերման համար:
7) 08 բաժնի 6 խմբի 1 դասի /հանգիստ, մշակույթ և կրոն/ գործառնական դասակարգման 5129 /այլ մեքենաներ և սարքավորումներ/ տնտեսագիտական հոդվածը ավելացնել 36615000 /երեսունվեց միլիոն վեց հարյուր տասնհինգ հազար/ ՀՀ դրամով Գավառ համայնքի կենտրոնական հրապարակի լուսավորության ցանցի, նստարանների, աղբամանների և ժամացույցի ձեռք բերման համար:

Կողմ՝ (9) Դեմ ՝(0) Ձեռնպահ՝ (0)

ԱՐԱՄ ՅԱԶԵՐՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ՋԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ՂԱՐԻԲՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՐՑ 2.

ՈՐՈՇՈՒՄ 19. ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ 2018Թ. ԲՅՈՒՋԵԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. Տ. Բրսիկյան/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Ս. Գապոյանը, Վ. Ավետիսյանը

Ղեկավարվելով ,,Իրավական ակտերի մասին'' Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ և 60-րդ , ,,Տեղական ինքնակառավարման մասին'' Հայաստանի Հանրապետության օրենքի 90-րդ հոդվածների պահանջներով, Գավառ համայնքի ավագանին որոշում է

Գավառ համայնքի 2018թ. բյուջեի պահուստային ֆոնդից

1. ՀՀ Կառավարության 17.03.2016թ. թիվ 264-Ն ,,Հանրային հատվածի կազմակերպությունների հիմնական միջոցների գույքագրման և վերագնահատման մասին'' որոշման համաձայն 4241 /մասնագիտական ծառայություններ/ տնտեսագիտական հոդվածով տրամադրել 900000 /ինն հարյուր հազար/ ՀՀ դրամ անկախ գնահատող կազմակերպությունների կողմից Գավառի համայնքապետարանի և ենթակայության տակ գտնվող համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հիմնական միջոցների և գույքի վերագնահատման աշխատանքները կատարելու համար:
2. Գավառ համայնքի փողոցների փոսային նորագման և ճաքալցման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայության ձեռք բերման համար 4241 /մասնագիտական ծառայություններ/ տնտեսագիտական հոդվածով տրամադրել 300 000 /երեք հարյուր հազար/ ՀՀ դրամ:
3.Գավառ համայնքի 1996-2012թթ. ժամանակահատվածի փաստաթղթերը ,,Հայաստանի ազգային արխիվ'' ՊՈԱԿ-ի Գեղարքունիքի մարզային մասնաճյուղին հանձնելու համար 4241 /մասնագիտական ծառայություններ/ տնտեսագիտական հոդվածով տրամադրել 500 000 /հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ:
4. Հայաստանի առաջին Հանրապետության 100-ամյակին նվիրված միջոցառումների կազմակերպման աշխատանքների համար 4269 /հատուկ նպատակային այլ նյութեր/ տնտեսագիտական հոդվածով տրամադրել 150000 /մեկ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ:
5. Գավառ համայնքի Դաշտամիջյան ճանապարհների ընթացիկ վերանորոգման համար 4251 /շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում/ տնտեսագիտական հոդվածով տրամադրել 1 500 000 /մեկ միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ:
6. Գավառ քաղաքի Ազատության 2-րդ փողոց 2-րդ անցուղու բնակիչների նախաձեռնությամբ նշված փողոցի հարթեցման աշխատանքների կազմակերպման համար 4251 /շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում/ տնտեսագիտական հոդվածով տրամադրել 330 000 /երեք հարյուր երեսուն հազար/ ՀՀ դրամ:

Կողմ՝ (9) Դեմ ՝(0) Ձեռնպահ՝ (0)

ԱՐԱՄ ՅԱԶԸՐՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ՂԱՐԻԲՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՐՑ 3.
ՈՐՈՇՈՒՄ 20. ԳԱՎԱՌԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. Տ. Բրսիկյան/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Գ. Ղարիբյանը, Ա. Մարուխյանը

Ղեկավարվելով ,,Իրավական ակտերի մասին'' Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի, ,Տեղական ինքնակառավարման մասին'' Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 28), 35-րդ

հոդվածի 1-ին մասի 7) և 50-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետերի դրույթներով, Գավառ համայնք ավագանին որոշում է

Գավառ համայնքում անասնաբուժական ծառայության գործունեության կազմակերպումը ապահովելուց համար Գավառի համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակում ավելացնել համայնքն սպասարկող անասնաբույժի 4 /չորս/ հաստիք, յուրաքանչյուրի պաշտոնային դրույքաչափը սահմանել 72752 /յոթանասուներկու հազար յոթ հարյուր հիսուներկու/ ՀՀ դրամ:

Կողմ` (9) Դեմ `(0) Ձեռնապահ` (0)

ԱՐԱՄ ՅԱԶԵՐՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ՂԱՐԻԲՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հարց 4.

ՈՐՈՇՈՒՄ 21. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԿԱՄ ՏԻՐԱՊԵՏՈՂԻ` ԻՐ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. Կ. Մանուկյան/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Վ. Հակոբյանը, Ա. Յազերյանը

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի աՀանրապետության օրենքի 18-րդ հոդվածի1-ին մասի 36-րդ կետով, Գավառ համայնքի ավագանին որոշում է

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի` իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման կարգը` համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

Կողմ` (9) Դեմ `(0) Ձեռնապահ` (0)

ԱՐԱՄ ՅԱԶԵՐՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ՂԱՐԻԲՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՐՑ 5

ՈՐՈՇՈՒՄ 22. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. Ա. Բաղալյան/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Գ. Դաշտոյանը, Վ. Ավետիսյանը

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, ,,Իրավական ակտերի մասին'' Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ և 60-րդ հոդվածների, ,,Տեղական ինքնակառավարման մասին'' Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10 և 18-րդ հոդվածի 1-ին մասի 21 կետերի դրույթներով, Գավառ համայնքի ավագանին որոշում է

1. Համաձայնություն տալ Գավառ քաղաքի Ազատության փողոցի 32/3 հասցեում գտնվող, Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող 05-001-0294-0051 կադաստրային ծածկագրով, 0.02558հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, այլ հողեր գործառնական նշանակության հողատարածքն աճուրդային կարգով օտարելուն:
2. 05-001-0294-0051 կադաստրային ծածկագրով, 0.02558հա մակերեսով հողատարածքի աճուրդով վաճառքի մեկնարկային գինը մեկ քառակուսի մետրի համար սահմանել 500 /հինգ հարյուր/ ՀՀ դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրը:

| Կողմ` (9) | Դեմ `(0) | Ձեռնպահ` (0) |
|---|---|---|
| ԱՐԱՄ ՅԱԶԵՐՅԱՆ | | |
| ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ | | |
| ԱՐՏԱԿ ՋԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ | | |
| ԳԱՐԵԳԻՆ ՂԱՐԻԲՅԱՆ | | |
| ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ | | |
| ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ | | |
| ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ | | |
| ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ | | |
| ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ | | |

ՀԱՐՑ 6.

ՈՐՈՇՈՒՄ 23. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. Ա. Բաղալյան/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Ս. Գապոյանը, Ս. Ամիրխանյանը

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, ,,Իրավական ակտերի մասին'' Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ և 60-րդ հոդվածների, ,,Տեղական ինքնակառավարման մասին'' Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10 և 18-րդ հոդվածի 1-ին մասի 21 կետերի դրույթներով, Գավառ համայնքի ավագանին որոշում է

1. Համաձայնություն տալ Գավառ քաղաքի Սայաթյան փողոցի 13/4 հասցեում գտնվող, Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող 05-001-0354-0028 կադաստրային ծածկագրով, 0.007հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողատարածքն աճուրդային կարգով օտարելուն:
2. 05-001-0354-0028 կադաստրային ծածկագրով, 0.007հա մակերեսով հողատարածքի աճուրդով վաճառքի մեկնարկային գինը մեկ քառակուսի մետրի համար սահմանել 500 /հինգ հարյուր/ ՀՀ դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրը:

Կողմ՝ (9) Դեմ ՝(0) Ձեռնապահ՝ (0)

ԱՐԱՄ ՅԱՋԵՐՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ՋԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ՂԱՐԻԲՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՐՑ 7.

ՈՐՈՇՈՒՄ 24. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. Ա. Բադալյան/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Վ. Հակոբյանը, Վ. Ավետիսյանը

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, ,,Իրավական ակտերի մասին'' Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ և 60-րդ հոդվածների, ,,Տեղական ինքնակառավարման մասին'' Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10 և 18-րդ հոդվածի 1-ին մասի 21 կետերի դրույթներով, Գավառ համայնքի ավագանին որոշում է

1. Համաձայնություն տալ Գավառ քաղաքի Բուռնազյան փողոցի 37/3 , Բուռնազյան փողոց 37/2, Բուռնազյան 37/1 հասցեներում գտնվող, Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող 05-001-0529-0092 կադաստրային ծածկագրով, 0.01173հա մակերեսով, 05-001-0529-0094 կադաստրային ծածկագրով 0.01142հա մակերեսով, 05-001-0529-0088 կադաստրային ծածկագրով, 0.0018հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, այլ հողեր գործառնական նշանակության հողատարածքներն աճուրդային կարգով օտարելուն:
2. 05-001-0529-0092 կադաստրային ծածկագրով, 0.01173հա մակերեսով, , 05-001-0529-0094 կադաստրային ծածկագրով 0.01142հա մակերեսով, 05-001-0529-0088 կադաստրային ծածկագրով, 0.0018հա մակերեսով հողատարածքների աճուրդով վաճառքի մեկնարկային գինը մեկ քառակուսի մետրի համար սահմանել 500 /հինգ հարյուր/ ՀՀ դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրը:

Կողմ՝ (9) Դեմ ՝(0) Ձեռնապահ՝ (0)

ԱՐԱՄ ՅԱՋԵՐՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ՋԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ՂԱՐԻԲՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՐՑ 8.
ՈՐՈՇՈՒՄ 25. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. Ա. Բաղալյան/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Գ. Ղարիբյանը, Ա. Յազերյանը

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, ,,Իրավական ակտերի մասին'' Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ և 60-րդ հոդվածների, ,,Տեղական ինքնակառավարման մասին'' Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21 կետով և ՀՀ կառավարության 12.04.2001թ. N 286 որոշմամբ, Գավառ համայնքի ավագանին որոշում է

1. Համաձայնություն տալ Գավառ քաղաքի Զորավար Անդրանիկի փողոց 3/2 հասցեում գտնվող, Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող 05-001-0380-0020 կադաստրային ծածկագրով, 0.00204հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, այլ հողեր գործառնական նշանակության հողատարածքն՝ Խաչիկ Մարինոսյանին և Վարսենիկ Շահինյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող, գոյություն ունեցող խանութը ընդլայնելու համար, ուղղակի վաճառքի միջոցով օտարելուն և վաճառքի մեկնարկային գին սահմանել 1ք.մ.-ի համար 1242 /մեկ հազար երկու հարյուր քառասուներկու/ ՀՀ դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրը:

Կողմ՝ (9) Դեմ ՝(0) Ձեռնապահ՝ (0)

ԱՐԱՄ ՅԱԶԵՐՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ՂԱՐԻԲՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՐՑ 9.
ՈՐՈՇՈՒՄ 26. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԵՏԱԳԱՅՈՒՄ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. Մ. Մանուկյան/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Գ. Դաշտոյանը, Ս. Ամիրխանյան

Ղեկավարվելով ,,Իրավական ակտերի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին կետի, ,,Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության N1918-Ն որոշմամբ հաստատված կարգի13-րդ կետի պահանջների՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայն քների /բնակավայրերի/ քաղաքաշինական աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի, անդամների 19.01.2018թ. N9 եզրակացությունը, Գավառ համայնքի ավագանին որոշում է

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի օգտագործման սխեմայում՝ գյուղատնտեսական նշանակության հողերից 05-001-1004-0008 կադաստրային ծածկագրի 0.0121հա վարելահողը և բնակավայրերի նշանակության 05-001-0710-0020 կադաստրային ծածկագրի 0.0325հա այլ հողերը փոխադրել

էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա՝ ,,էներգետիկայի օբյեկտների հողեր" գործառնական նշանակությամբ՝ հետագայում, ուղղակի վաճառքի կարգով օտարել ,,ԲԷՑ" ՓԲԸ-ին, մեկ քառակուսի մետրը 1242 /մեկ հազար երկու հարյուր քառասուներկու/ հհ դրամ արժեքով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Իրան-Հայաստան 400 ԿՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի հենասյուների/ կառուցման և սպասարկման համար:

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ՝ (9) Դեմ ՝(0) Ձեռնպահ՝ (0)

ԱՐԱՄ ՅԱԶԵՐՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ՂԱՐԻԲՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՐՑ 10.

ՈՐՈՇՈՒՄ 27. ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. Վ. Խաչատրյան/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Ս. Գապոյանը, Ա. Զանգեզուրյանը

Ղեկավարվելով ,,Իրավական ակտերի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ և 60-րդ , ,,Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ և 13-րդ հոդվածի 10-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Գավառ համայնքի ավագանու 21.08.2017թ. թիվ 5 նիստի թիվ 36 որոշման 4-րդ մասի պահանջները, Գավառ համայնքի ավագանին որոշում է

4729 /այլ նպաստներ բյուջեից/ տնտեսագիտական հոդվածով

1. Էդիկ Ռաֆիկ Գաբրիելյանին, որպես սոցիալապես անապահով ընտանիք տրամադրել 60000 /վաթսուն հազար/ ՀՀ դրամ դրամական օգնություն՝ բուժման ծախսերը մասնակի հոգալու նպատակով:
2. Կարեն Բալազոզյանին, որպես սոցիալապես անապահով ընտանիք, տրամադրել 100000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ դրամական օգնություն՝ իր սրտի հետ կապված հրատապ բուժման ծախսերը հոգալու նպատակով:
3. Սամվել Մացակի Մելքոնյանին տրամադրել 50 000/հիսուն հազար/ ՀՀ դրամ դրամական օգնություն՝ երկրորդ կարգի զին . հաշմանդամ Սամվել Մայիսի Մելքոնյանի մոր Ռոզիկ Մելքոնյանի թաղման ծախսերը հոգալու նպատակով :
4. Ռուբեն Սումբաթյանին տրամադրել 100000 /մեկ հարյուր հազար/ՀՀ դրամ, զոհված զինծառայող Մաքսիմ Սումբաթյանի մոր Մայրանուշ Տիժոյանի թաղման ծախսերը հոգալու նպատակով:

Կողմ` (9) Դեմ `(0) Ձեռնպահ` (0)

ԱՐԱՄ ՅԱՋԵՐՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ՋԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ՂԱՐԻԲՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՐՑ 11.

ՈՐՈՇՈՒՄ 28. ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ,,ԳԱՎԱՌԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ'' ՀՈԱԿ-Ի ՀԱՇՎԵԿՇԻՌՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՑՐՏԱՀԱՐՎԱԾ, ՉՈՐԱՑԱԾ ԾԱՌԱՏԵՍԱԿՆԵՐԸ ՀԱՇՎԵԿՇԻՌՆԵՐԻՑ ԴՈՒՐՍ ԳՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. Յու. Մինասյան/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Ա. Մարուխյանը, Վ. Ավետիսյանը

Ղեկավարվելով ,,Իրավական ակտերի մասին'' Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ և 60-րդ հոդվածների, Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի, ,,Կազմակերպությունների գույքի դուրս գրման կարգը հաստատելու մասին'' Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 31.10.2007թ. թիվ 787-Ն որոշմամբ հաստատված կարգի դրույթներով, հիմք ընդունելով ,,Գավառ համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում'' ՀՈԱԿ-ի տնօրենի 02.04.2018թ. զեկուցագրի հիման վրա Գավառի քաղաքապետի 03.04.2018թ. թիվ 51 կարգադրությամբ ձևավորված հանձնաժողովի 13.04.2018թ. ակտը, Գավառ համայնքի ավագանին որոշում է

1. Գավառ համայնքի տարածքում տնկված, ժամանակի ընթացքում տարածքի բնակլիմայական պայմաններին չհարմարված, քամիներից ու ցրտահարությունից չորացած Գավառ համայնքի և ,,Գավառ քաղաքային համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում'' ՀՈԱԿ-ի հաշվեկշիռներում գտնվող ծառատեսակներից թվով 845 /ութ հարյուր քառասունհինգ/ ծառերը դուրս գրել Գավառ համայնքի և ,,Գավառ քաղաքային համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում'' ՀՈԱԿ-ի հաշվեկշիռներից համաձայն ներկայացված աղյուսակի:

| | Ապրանքի անվանումը | Չափի միավորը | Քանակը | Գինը | Գումարը |
|---|---|---|---|---|---|
| 1 | Տույա | հատ | 5 | 105000 | 525000 |
| 2 | Տույա | հատ | 15 | 30000 | 450000 |
| 3 | Բարդի | հատ | 64 | 1200 | 76800 |
| 4 | Թույա | հատ | 10 | 17000 | 170000 |
| 5 | Թույա | հատ | 25 | 29000 | 725000 |
| 6 | Եղևնի /արծաթափայլ | հատ | 7 | 59000 | 413000 |
| 7 | Բարդի | հատ | 83 | 2500 | 207500 |
| 8 | Բարդի կանադական | հատ | 103 | 1000 | 103000 |
| 9 | Տույա | հատ | 31 | 16500 | 511500 |
| 10 | Սասնա | հատ | 30 | 2200 | 66000 |
| | Ընդամենը | | 373 | | 3247800 |

| | Ապրանքի անվանումը | Չափի միավորը | Քանակը | Գինը | Գումարը |
|---|---|---|---|---|---|
| 1 | Բարդի | հատ | 450 | 1000 | 450000 |
| 2 | Ակացիա | հատ | 5 | 10800 | 54000 |
| 3 | Եղևնի 80 սմ | հատ | 3 | 49000 | 147000 |
| 4 | Տուվա՝ փոքր | հատ | 14 | 20000 | 280000 |
| | Ընդամենը | | 472 | | 931000 |

Կողմ՝ (9) Դեմ ՝(0) Ձեռնապահ՝ (0)

ԱՐԱՄ ՅԱԶԵՐՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ՋԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ՂԱՐԻԲՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՐՑ 12.

ՈՐՈՇՈՒՄ 29. ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ 2-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 4 ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՆԴԵԼՈՒ, ՇԻՆՈՒԹՅԱՆ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԵՎ ՕԳՏԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ

/զեկ. Ա. Բադալյան/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Գ. Դաշտոյանը, Գ. Ղարիբյանը

Ղեկավարվելով ,,Իրավական ակտերի մասին'' Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ և 60-րդ հոդվածների, Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի դրույթներով, հիմք ընդունելով Քաղաքաշինության պետական կոմիտեի ,,Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոն'' ԲԲԸ-ի եզրակացությունը ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Ազատության 2-րդ փողոց թիվ 4 հասցեում գտնվող ,,Հեքիաթ'' մանկապարտեզի համալիր մասնաշենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ, Գավառ համայնքի ավագանին որոշում է

1. Համաձայնություն տալ քանդելու Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող Գավառ քաղաքի Ազատության 2-րդ փողոց թիվ 4 հասցեում գտնվող չորրորդ կարգի վթարայնության ,,Հեքիաթ'' մանկապարտեզի համալիր մասնաշենքը:
2. Նշված շինության շուկայական և օգտահանության արժեքները որոշելու համար դիմել անշարժ գույքի գնահատում իրականացնող արտոնագրված անկախ կազմակերպության:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրը:

Կողմ՝ (9) Դեմ ՝(0) Ձեռնապահ՝ (0)

ԱՐԱՄ ՅԱԶԵՐՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ՋԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ՂԱՐԻԲՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՐՑ 13.

ՈՐՈՇՈՒՄ 30. ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 60 ՏՈՆՆԱ ՏԱՐՈՂՈՒԹՅԱՄԲ ՏԱՐՐԱՆԵՐԸ ՄՆԱՑՈՐԴԱՅԻՆ ԱՐԺԵՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՃՈՒՐԴ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. Գ. Բոշյան/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Ս. Ամիրխանյանը, Գ. Դաշտոյանը

Ղեկավարվելով ,,Իրավական ակտերի մասին'' Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ և 60-րդ հոդվածների, Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 21) և 42) կետերի, ,,Հրապարակային սակարկությունների մասին'' Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով, նկատի ունենալով, որ Գավառ համայնքի սեփականությանը հանձնված չորս հատ 60 /վաթսուն/ տոննա տարողությամբ տարրաները երկարատև շահագործման և մաշվածության հետևանքով հետագա օգտագործման համար դարձել են ոչ պիտանի, Գավառ համայնքի ավագանին որոշում է

1. Գավառ քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող, նախկինում երկարատև օգտագործման արդյունքում մաշված, հետագա օգտագործման համար ոչ պիտանի չորս հատ 60 /վաթսուն/ տոննա տարողությամբ տարրաները օտարել աճուրդային եղանակով:
2. Աճուրդում յուրաքանչյուր տարրայի համար մեկնարկային գին սահմանել Գավառի համայնքապետարանի հաշվեկշռում ամրագրված նրա մնացորդային արժեքը՝ 25000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրը:

Կողմ՝ (9) Դեմ ՝(0) Ձեռնապահ՝ (0)

ԱՐԱՄ ՅԱԶԵՐՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ՂԱՐԻԲՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՐՑ 14.

ՈՐՈՇՈՒՄ 31. ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԵՐԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. Մ. Մանուկյան/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Ա. Մարուխյանը, Վ. Հակոբյանը

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի, 18-րդ հոդվածի 21) կետով, ՀՀ հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի դրույթներով, Գավառ համայնքի ավագանին որոշում է

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 2-րդ կարգի 50հա մակերեսով, 3-րդ կարգի 100հա մակերեսով, 4-րդ կարգի 150հա մակերեսով և 5-րդ կարգի 80հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողերը, 3-րդ կարգի 250հա մակերեսով, 4-րդ կարգի 5հա գյուղատնտեսական նշանակության խոտհարքները, 4-րդ կարգի 120հա մակերեսով, 5-րդ կարգի 100հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության արոտավայրերը՝ առավելագույնը մինչև 25 տարի օգտագործման ժամկետով տրամադրել վարձակալության:
2. Նշված հողատեսքերից 2-րդ կարգի մեկ հեկտոր վարելահողի տարեկան վարձավճարը սահմանել 7500 /յոթ հազար հինգ հարյուր/, 3-րդ կարգի մեկ հետար վարելահողի տարեկան վարձավճարը՝ 6200 /վեց հազար երկու հարյուր/, 4-րդ կարգի մեկ հեկտար վարելահողի տարեկան վարձավճարը՝ 4200 /չորս հազար երկու հարյուր/, 5-րդ կարգի մեկ հեկտար վարելահողի տարեկան վարձավճարը 2000 /երկու հազար/ ՀՀ դրամ, 3-րդ կարգի մեկ հեկտար խոտհարքի տարեկան վարձավճարը՝ 3600 /երեք հազար վեց հարյուր, 4-րդ կարգի մեկ հեկտար խոտհարքի տարեկան վարձավճարը՝ 2200 /երկու հազար երկու հարյուր/ ՀՀ դրամ, 4-րդ կարգի մեկ հեկտար արոտավայրի վարձավճարը՝ 2000 /երկու հազար/ ՀՀ դրամ, 5-րդ կարգի մեկ հեկտար արոտավայրի վարձավճարը՝ 700 /յոթ հարյուր/ ՀՀ դրամ:

Կողմ՝ (9) Դեմ ՝(0) Ձեռնպահ՝ (0)

ԱՐԱՄ ՅԱԶԵՐՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ՂԱՐԻԲՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳՈՒՐԳԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ